

ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Է. Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սովետական քաղաքացիների անձնական սեփականության պաշտպանությունը սոցիալիստական իրավունքի կարևոր խնդիրն է: Սուբյեկտիվ իրավունքի ռեալ իրականացման ապահովվածությունից է կախված հասարակության անդամների նյութական և կոլտնտեսական պահանջմունքների բավարարումը:

Սեփականության հարաբերությունները պահպանվում են սովետական իրավունքի բոլոր ճյուղերի՝ պետական, վարչական, քաղաքացիական, կոլտնտեսային, քրեական և այլ նորմերով: Սովետական իրավունքի յուրաքանչյուր ճյուղ իր առարկայի և կարգավորման մեթոդի սահմաններում կանոնադրում է անձնական սեփականության հարաբերությունների այս կամ այն կողմերը՝ դրանք ամրապնդելու, զարգացնելու և պաշտպանելու նպատակով: Իրավունքի բոլոր ճյուղերի մեջ անձնական սեփականության իրավունքի քաղաքացիական իրավական պաշտպանության եղանակներն ունեն առանձնակի նշանակություն, քանի որ դրանք անմիջականորեն են ուղղված քաղաքացիների խախտված գույքային իրավունքների վերականգնմանը:

Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքների<sup>1</sup> 19 հոդվածի համաձայն (ՀՍՍՀ և ՌՍՖՍՀ քաղաքացիական օրենսգրքի 92 հոդվածներ)<sup>2</sup> սեփականատիրոջն են պատկանում օրենքի սահմանած շրջանակներում գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները: Քաղաքացիական իրավունքի նորմերով անձնական սեփականության իրավունքի պաշտպանությունը հենց հանգեցվում է այն քանին, որպեսզի օրենքը սեփականատիրոջն ընձեռի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու գույքի կանոնավոր տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը:

Անձնական սեփականության քաղաքացիական-իրավական պաշտպանության առանձնահատկությունները նախ և առաջ որոշվում են քաղաքացիական-իրավական կարգավորման առարկայով ու մեթոդով: Քաղաքացիական իրավունքը կարգավորում և պահպանում է գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հարաբերությունները, որոնք թվարկված են Հիմունքների 25 հոդվածում և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան հոդվածներում, խոչընդոտում գույքի անօրինական

<sup>1</sup> Այսուհետև՝ Հիմունքներ:

<sup>2</sup> Այսուհետև՝ ՀՍՍՀ Քաղ. օր. և ՌՍՖՍՀ Քաղ. օր.:

տեղաշարժերը, ապահովում սեփականատիրոջը պատճառված վնասի հատուցումը: Քաղաքացիական իրավական մեթոդը կիրառվում է կողմերի իրավաբանորեն հավասար հարաբերությունների նկատմամբ<sup>3</sup>: Քաղաքացիական իրավունքի նորմերն ուղղված են խախտված դույքային իրավունքի վերականգնմանը և ունեն նախազգուշական-դատարակչական բնույթ: Քաղաքացիական-իրավական պաշտպանությունը կարող է իրականացվել համապատասխան դեպքերում տուժողին հնարավորություն ընձեռելով պահանջելու ճանաչել իր իրավունքը (և՛ թե՛ այն խախտվել կամ վիճարկվում է), դադարեցնել այն խախտող գործողությունները, կատարել գրական գործողություններ՝ խախտման հետևանքները վերացնելու և խախտված իրավունքը վերականգնելու նպատակով, հատուցել պատճառված վնասը, խնդրույն կերպով պաշտպանել իր իրավունքները՝ առանց պետական օրդաններին դիմելու:

Անձնական գույքի հետ առնչվող հարաբերությունների բազմազանությունը և ստատիկ ու դինամիկ վիճակում դրանց պահպանության անհրաժեշտությունը պայմանավորում են այդ իրավունքների քաղաքացիական-իրավական պաշտպանության ձևերի ու եղանակների տարբերությունն ու բազմազանությունը: Սեփականության իրավունքի ինստիտուտն ունի պաշտպանության յուրատեսակ միջոցներ: Այդ հանգամանքը պայմանավորում է պաշտպանության տարբեր եղանակների վերլուծության անհրաժեշտություն՝ պարզաբանելու, թե ինչպիսի՞ պայմաններում է ծագում այս կամ այն եղանակի կիրառման պահանջը և ի՞նչ չափով է այն ապահովում սուբյեկտիվ իրավունքի իրականացման հնարավորությունը:

Իրավունքի պաշտպանությունը հնարավոր է միայն որոշակի ձևով: Որպես կանոն, քաղաքացիական իրավունքին հատուկ է սեփականության իրավունքի պաշտպանության հայցային կարգը: Սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված քաղաքացիական-իրավական հայցերը լինում են՝ իրային-իրավական և պարտավորական-իրավական: Իրային-իրավական եղանակներն են գույքն ապօրինի տիրապետությունից ետ պահանջելը (վինդիկացիոն հայց հարուցելով), սեփականատիրոջ պահանջը իր իրավունքի՝ տիրապետումից զրկելու հետ չզուգորդված խախտումների վերացման մասին (նեգատոր հայց ներկայացնելով): Սեփականության իրավունքի պաշտպանություն պայմանագրերով կամ արտապայմանագրային հայցեր ներկայացնելու ճանապարհով կիրառվում են նաև պաշտպանության պարտավորական-իրավական եղանակներ (պայմանագրերի չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ պատճառված վնասների հատուցման, գույքին պատճառված վնասի հատուցման, ապօրինի ձեռք բերած կամ խնայած գույքը վերադարձնելու մասին պահանջը և այլն):

Սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները բացարձակի և հարաբերականի, իրայինի (ընչականի) և պարտավորականի բաժանելու հարցը վիճելի է: Մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ քաղաքացիական իրավունքների բաժանումն իրայինի ու պարտավորականի ունի միայն պայմանական նշանակություն<sup>4</sup>: Նման կարծիքի հետ դժվար է համաձայնվել: Այդ

<sup>3</sup> В. Ф. Яковлев, Гражданско-правовой метод регулирования общественных отношений, Свердловск, 1972, стр. 84.

<sup>4</sup> «Советское гражданское право», т. I, М., 1950, стр. 113—115; Д. М. Генкин,

հարաբերությունների մեջ կան էական տարբերություններ, որոնք պայմանավորված են դրանց բովանդակությամբ և մասնակիցների վրա իրավական ներգործության տարբեր հնարավորություններով: Ուստի և անձնական սեփականության իրավունքի պաշտպանության այս կամ այն եղանակի կիրառման հարցը որոշելիս հարաբերությունների միջև եղած տարբերություններն ունեն պրակտիկ նշանակություն: Պաշտպանության եղանակի որոշելը կախված է խախտված իրավահարաբերության բնույթից:

Վինդիկացիոն հայցի առավելությունն այն է, որ նրա միջոցով վերականգնվում են մինչև սեփականության խախտումը եղած հարաբերությունները: Բայց վինդիկացիոն հայցի այդ առանձնահատկությունը սահմանափակում է նրա կիրառման ոլորտը միայն այնպիսի դեպքերով, երբ կորսված գույքը առկա է բնեղենով և սեփականատիրոջը հայտնի է, թե այն ում մոտ է գտնվում: Իսկ եթե այդ իրը բնեղենով գոյություն չունի կամ այլ պատճառներով հնարավոր չէ պահանջել (ինչպես դա հաճախ պատահում է) վինդիկացիոն հայց հարուցվել չի կարող: Նման դեպքերում անձնական սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է պարտավորական իրավունքի նորմերով: Վիճելի գույքի վերաբերմամբ պայմանագրային հարաբերությունների գոյությունը սեփականատիրոջը տալիս է պաշտպանության այնպիսի միջոց, ինչպիսին պայմանագրային հայցն է՝ իրը բնեղենով պահանջելու կամ պարտավորության չկատարումով (ոչ պատշաճ կատարումով) պատճառված վնասները հատուցելու մասին: Նման դեպքերում արտապայմանագրային հայցը բացառվում է:

Պաշտպանության որոշակի եղանակի ընտրությունը կախված է գույքի տեսակից: Բացառվում է, օրինակ, բարեխիղճ ձեռք բերողից դրամի, ինչպես նաև արժեթղթերի ետ պահանջելը (ՀՍՍՀ Քաղ. օր. 156 հոդված, ՌՍՖՍՀ Քաղ. օր. 154 հոդված): Վինդիկացիայի հնարավորությունը բացառվում է տեսական իշխերով (չափ—կշիռ) որոշվող իրերի նկատմամբ: Միաժամանակ, ինչպես իրային-իրավական, այնպես էլ պարտավորական-իրավական պահանջները կարող են ուղղված լինել միասնական արդյունքի հասնելուն: Օրինակ, ապօրինի տիրապետությունից գույքը ետ պահանջելը (ՀՍՍՀ Քաղ. օր. 153 հոդված, ՌՍՖՍՀ Քաղ. օր. 151 հոդված) և վարձակալական պայմանագրով ժամանակավոր օգտագործման հանձնված գույքը ետ վերադարձնելու մասին պահանջը (ՀՍՍՀ Քաղ. օր. 295 հոդված և ՌՍՖՍՀ Քաղ. օր. 291 հոդված) ուղղված են գույքի բնեղենով ստանալուն:

Անձնական սեփականության իրավունքի պաշտպանության իրային-իրավական և պարտավորական-իրավական եղանակները սեփականության հարաբերությունների պաշտպանությանն ուղղված միասնական համալիր են: Այդ եղանակների մեջ էական տեղ են գրավում ուրիշի ապօրինի տիրապետությունից գույքը ետ վերադարձնելու մասին պահանջները (ՀՍՍՀ Քաղ. օր. 153 հոդված և ՌՍՖՍՀ Քաղ. օր. 151 հոդված):

Ինչպես նշվեց, իրավական տեսակետից վինդիկացիոն վերադարձը նշանակում է խախտված սեփականության իրավունքի վերականգնում: Նման վերադարձի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ սեփականատերը կորցրել

է գուլքի տիրապետման, օգտագործման ու տնօրինման սոսկ փաստական և ոչ թե իրավական հնարավորությունը: Գուլքը վերցվում է այն անձից, որը փաստորեն տիրապետում է վիճելի գուլքը, չունենալով այդ իրավունքը: Վինդիկացիան մյուս հայցերից տարբերվում է ըստ սուբյեկտի, հիմքի, առարկայի և նպատակի: Վինդիկացիայի սուբյեկտներն են գուլքը չտիրապետող սեփականատերերը և ապօրինի տիրապետողը, իսկ նրա հայցի հիմքն է սեփականություն իրավունքը<sup>5</sup>, Վինդիկացիոն հայցի առարկա կարող է լինել միայն անհատապես որոշվող իրը<sup>6</sup>:

Իրեն պատկանող գուլքը պահանջելու սեփականատիրոջ հնարավորությունը կախված է այն բանից, թե այն անձը, որի մոտ գտնվում է գուլքը, բարեխիղճ է, թե անբարեխիղճ: Համաձայն ՀՍՍՀ Քաղ. օր. 154 հոդվածի առաջին մասի (ՌՍՖՍՀ Քաղ. օր. 152 հոդվածի առաջին մաս) բարեխիղճ համարվում է այն անձը, որը չի իմացել և չէր կարող իմանալ, թե իրը ձեռք է բերում այն օտարելու իրավունք չունեցող անձից: Յուրաքանչյուր այլ ձեռք բերող օրենքով նախաշվում է անբարեխիղճ (կարևոր է նաև իմանալ, թե իրը հատուցմամբ է ձեռք բերվել, թե անհատույց): Սեփականատիրն իրավունք ունի անբարեխիղճ ձեռք բերողից իրը պահանջել ցանկացած պարագայում, իսկ բարեխիղճ ձեռք բերողից՝ անհատույց ձեռք բերելու դեպքում:

Երբ բարեխիղճ ձեռք բերողն իրը ստացել է հատուցմամբ, ապա սեփականատերն իրը կարող է պահանջել այն դեպքում, երբ ինքը կամ այն անձը, որին այդ իրը հանձնված է եղել ի տիրապետումն, իրը կորցրել են, երբ իրը նրանցից հափշտակվել է, կամ էլ զուրս է եկել նրանց տիրապետումից անկախ վերջիններիս կամքի:

ՀՍՍՀ Քաղ. օր. 157 հոդվածը (ՌՍՖՍՀ Քաղ. օր. 155 հոդված) նախատեսում է այն բոլոր եկամուտների հատուցումը պահանջելու սեփականատիրոջ իրավունքը, որ փաստորեն ստացել է անբարեխիղճ ձեռք բերողը կամ պետք է ստանար իրի փաստացի տիրապետման ամբողջ ժամանակամիջոցում: Հիշյալ նորմը ոչ լրիվ է բնութագրում եկամուտների և ծախսերի հասկացությունը: Քվում է, որ սեփականատիրոջ մոտ սեփականության իրավունք է ծագում այն եկամուտների նկատմամբ, որոնք անբարեխիղճ տիրապետողը ստացել է փաստացի տիրապետման պրոցեսում: Ինչ վերաբերում է ստանալիք եկամուտներին, որ նա չի ստացել, ապա այդ հանգամանքը պարզաբանման կարիք ունի: Սուբյեկտիվ սեփականության իրավունքը ծագում է որոշակի իրի նկատմամբ: Հետևաբար, չստացված եկամուտների (փող կամ գուլք) նկատմամբ սեփականության իրավունք չի ծագում: Հիշյալ նորմում խոսվում է չստացված այն եկամուտների մասին, որոնք պետք է ստացված լինեին և որոնց նկատմամբ կարող էր սեփականության իրավունք ծագել: Իսկ անիրավաչափ գործողությունների հետևանքով կորչում է եկամուտներ ստանալու ռեալ հնարավորությունը, հետևաբար և վերջիններիս նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման հնարավորությունը: Դրանով իսկ սեփականատիրոջը պատճառվում է նյութական վնաս: Այս առումով սխալ է թվում Վ. Կոֆմանի

<sup>5</sup> М. М. Агарков, Обязательство по советскому гражданскому праву («Ученые труды Всесоюзного института юридических наук», вып. 3, 1940, стр. 25); И. Б. Новицкий, Л. А. Лунц, Общее учение об обязательстве. М., 1950, стр. 52.

<sup>6</sup> В. Ф. Маслов, Основные проблемы права личной собственности в период строительства коммунизма в СССР, Харьков, 1968, стр. 284.

այն կարծիքը, որ «վնաս (կորուստ) պատճառել տերմինն» անընդունելի է այն հարաբերությունների նկատմամբ, որոնց դեպքում առկա բարիքին ոչ մի վնաս չի հասցված, իսկ կորուստն արտահայտվում է շտապված եկամուտների ձևով:

Օրենքը սահմանում է իրի բարելավման համար բարեխիղճ ձեռք բերողի կատարած ծախսերի հատուցման կարգ: Ծախսերի տակ հասկացվում են (անհրաժեշտից առավել) զանազան լրացուցիչ ծախսերը, որոնք ավելացնում են տվյալ իրի արժեքը: Սակայն գրանք չպետք է փոփոխեն իրի էությունը, այլապես վիճակագրիչի առարկան կդադարի բնեղենով գոյություն ունենալուց:

ՀՍՍՀ Քաղ. օր. 157 հոդվածը (ՌՍՖՍՀ Քաղ. օր. 155 հոդված) վերացնում է սեփականատիրոջ կողմից բարեխիղճ ձեռք բերողի հաշվին անհիմն գույքաչին օգուտ ձեռք բերելու հնարավորությունը՝ կատարված բարելավումների մասում: Հիշատակված նորմի երկրորդ մասին համապատասխան, բարեխիղճ տիրապետողը կարող է բարելավումներն իրեն թողնել, եթե դա հնարավոր է առանց իրին վնաս հասցնելու: Հակառակ դեպքում նա իրավունք ունի իրի արժեքի ավելացման սահմաններում սեփականատիրոջից պահանջելու բարելավումների համար կատարված ծախսերը: Օրենքի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ անբարեխիղճ ձեռք բերողն իրավունք չունի իրեն պահելու բարելավումները կամ կատարված ծախսերի դիմաց հատուցում պահանջել: Այդ նշանակում է, որ իրը սեփականատիրոջն է փոխանցվում բոլոր կատարված բարելավումներով հանդերձ, և այդպիսով նա ստանում է անհիմն գույքաչին օգուտ: Ղազախական ՍՍՀ Քաղ. օր. 147 հոդվածն այս հարցը լուծում է այլ կերպ: Նշված հոդվածի երրորդ մասի համաձայն, անբարեխիղճ տիրապետողի կատարած բարելավումների արժեքը սեփականատիրոջից գանձվում է հօգուտ պետության: Նպատակահարմար է նման նորմա սահմանել նաև մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան հոդվածներում:

Սեփականատիրոջ շահերը կարող են խախտվել ոչ միայն այն դեպքերում, երբ իրը այս կամ այն պատճառով գտնվում է երրորդ անձի ապօրինի տիրապետության տակ, այլև այն ժամանակ, երբ գույքը սեփականատիրոջ տիրապետության տակ է, սակայն նրան խոչընդոտում են իրականացնել օգտագործման և տնօրինման իրավագործությունները: Սեփականատերն իր շահերը պաշտպանելու համար իրավունք ունի պահանջել վերացնելու գույքի օգտագործմանը խանգարող խոչընդոտները: Տիրապետումից զրկվելու հետ չկապված խախտումներից սեփականության իրավունքի պաշտպանության հարցը քաղաքացիական իրավունքի գիտության մեջ կոչվում է նեգատոր հայց:

Հիմունքների 28 հոդվածի 6-րդ մասի (ՀՍՍՀ Քաղ. օր. 158 հոդված, ՌՍՖՍՀ Քաղ. օր. 156 հոդված) համաձայն ներկայացվում են նեգատոր հայցեր, ըստ որոնց սեփականատերը կարող է պահանջել իր իրավունքի ամեն մի խախտման վերացում, թեկուզ և այդ խախտումները զուգորդված չլինեն տիրապետումից զրկելու հետ: Նեգատոր հայցի հարուցման հիմք է երրորդ անձի ապօրինի վարքագիծը՝ անկախ մեղավորությունից: Բավարար է սոսկ խախտման փաստը, արգելքի կամ խոչընդոտի առկայությունը, որոնք ղեկավարացնում կամ

խանգարում են սեփականատիրոջը՝ իրականացնելու տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավազորությունները:

Նեգատոր պահանջի սուբյեկտն սեփականատիրոջ իրավասությունների իրականացման խոչընդոտները վերացնող և հետագայում նման խախտումներն արգելակող գործողությունների կատարումն է: Եթե սեփականատերը վրկվում է գույքն օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից, ապա նրա պահանջները հանգեցվում են այն հետևանքների վերացմանը, որոնք առավել են երրորդ անձանց անիրավաչափ վարքագծի պատճառով: Նեգատոր հայցով անձնական սեփականության իրավունքի պաշտպանությունն անթույլատրելի է, եթե կողմերը գտնվում են պայմանագրային հարաբերությունների մեջ: Բայց սրբ կարգի վեճերի լուծման ժամանակ պետք է ղեկավարվել սլարտավորական իրավունքի նորմերով:

Նեգատոր հայցը իրային է և այդ իսկ պատճառով կարող է ներկայացվել միայն այն դեպքում, եթե սեփականության իրավունքի խախտումը հայցի ներկայացման պահին չի դադարել: Եթե նեգատոր հայցի ներկայացման պահին խախտումը դադարել է, ապա վնասի առկայության դեպքում սեփականատերը պարտավորականություն չի կրում իրավական հայց ներկայացնելով իրավունք ունի վնասների հատուցում պահանջել:

ՀՍՍՀ Քաղ. օր. 158 հոդվածի (ՌՍՖՍՀ Քաղ. օր. 156 հոդված) նորմերը ցուցումներ չեն պարունակում այն միջոցների վերաբերյալ, որոնք դատարանի որոշումը չկատարելու դեպքում կարող են կիրառվել խախտողի նկատմամբ: Այդ կապակցությամբ նպատակահարմար է միտքենական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան հոդվածները լրացնել կանոնով, ըստ որի, եթե դատարանի որոշումը չի կատարվում, վերջինս իրավունք ունի խախտողից հօգուտ պետության տուգանք բռնագանձել<sup>8</sup>: Նման կանոնը կապահովեր անձնական սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետության բարձրացումը, անիրավաչափ վարքագծի հետևանքների վերացման նպատակով խախտողի նկատմամբ կիրականացվեին իրավական ներգործության համալիր միջոցներ: Եթե սեփականության իրավունքը գոյություն է ունեցել մինչև խախտումը և պահպանվում է դրանից հետո էլ, ապա այդ դեպքում ծագող հարաբերությունն անմիջականորեն բխում է սեփականության իրավունքից, հետևաբար հանդիսանում է իրային: Այլ հարաբերությունները ծագում են այն դեպքում, երբ ուրիշ անձի գործողությունները յայպես թե այնպես հանգեցնում են անձնական սեփականության իրավունքի դադարեցմանը:

Երկար ժամանակ տարածված էր այն տեսակետը, որ սեփականության իրավունքի խախտումը միշտ էլ այնպիսի շարունակվող իրավախախտում է, երբ անձի սեփականատիրական իրավունքը պահպանվում է, սակայն նա զրկված է այն (կամ առանձին իրավազորությունները) իրականացնելու փաստացի հնարավորությունից: Այդ արտապայմանագրային իրավախախտման բնույթը նկատի ունենալով եզրակացություններ էին արվում սեփականատիրոջ իրավազորությունների պաշտպանության յուրահատուկ եղանակների մասին:

<sup>8</sup> Այսպիսի կանոն սահմանված է ՌՍՖՍՀ, ՀՍՍՀ և մյուս միտքենական հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի 7-րդ հոդվածով՝ քաղաքացիների պատվի և արժանապատվության պաշտպանության առնչությամբ:

պնդում էին քաղաքացիական իրավունքում ավանդական դարձած այն դրույթը, ըստ որի իրային իրավունքը պաշտպանվում է միայն իրային-իրավական միջոցներով<sup>9</sup>։ Նշված կարծիքն անվիճելի չէ։ Այսպես, Ա. Վենեդիկտովը գտնում էր, որ գույքի քաղաքացիական իրավական պաշտպանության կարևորագույն միջոցներ են ոչ միայն իրային-իրավական, այլև պարտավորական-իրավական ևղանակները, մասնավորապես պայմանագրային և արտապայմանագրային վնասների հատուցումը<sup>10</sup>, Ա. Արզամասցևը<sup>11</sup>, Դ. Նրեմեևը<sup>12</sup>, Լ. Խալֆինան<sup>13</sup> և ուրիշները իրայինի հետ մեկտեղ սոցիալիստական և անձնական սեփականության իրավունքի պաշտպանության միջոցներին են վերագրում պարտավորական-իրավական միջոցները՝ պայմանագրերից և դեղիկներից բխող հայցերը։

Նրեմեևն կասկածի տակ է առնում այն դրույթը, որ անձնական սեփականության իրավունքը պաշտպանվում է ոչ միայն իրային-իրավական, այլև պարտավորական-իրավական եղանակներով։ Դ. Գենկինի կարծիքով, պարտավորական իրավական հայցերին, որոնք տնտեսական առումով սոսկ վերջին հաշվով են ուղղված սեփականության իրավունքի պաշտպանությանը, բնորոշ է այն, որ դրանք կազմող պահանջը բխում է ոչ թե սեփականության իրավունքից (նրա խախտման դեպքում), այլ հիմնվում է ուրիշ իրավական ինստիտուտների և դրանց համապատասխանող սուբյեկտիվ իրավունքների վրա<sup>14</sup>։ Այդ կարծիքը բաժանող Վ. Մասլովը, Օ. Իոֆֆեն և ուրիշներ գտնում են, որ սեփականության իրավունքի պաշտպանության եղանակներ են հանդիսանում միայն յուրահատուկ իրային հայցերը (վնեդիկացիոն ու նեգատոր), իսկ մյուս հայցերն ուղղված են ոչ թե սեփականության իրավունքի, այլ պարտավորական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը<sup>15</sup>։

Թվում է, որ պարտավորական-իրավական հայցերի օգնությամբ նույն իրին պատճառված վնասները վերացնելուց հետո այն սեփականատիրոջը վերադարձնելիս տեղի է ունենում պարտավորական առումով իրավունքների պաշտպանություն, որի միջոցով պաշտպանվում է նաև սեփականության իրավունքը։ Վնասվածքները վերացնելուց և իրը վերադարձնելուց հետո սեփականատիրոջը պատկանող սուբյեկտիվ իրավունքները բնույթն ու ծավալը դառնում են նույնպիսին, ինչպիսին մինչ իրավախախտումն էին։ Հետևաբար, հիմքեր չկան չընդունելու, որ պարտավորական-իրավական եղանակները ծա-

<sup>9</sup> Д. М. Генкин, указ. соч., стр. 43; его же, Право собственности в СССР, М., 1961, стр. 177; В. А. Тархов, Некоторые спорные вопросы охраны имущественных прав трудящихся по советскому гражданскому законодательству («Ученые труды Саратов. юридич. ин-та», вып. 2, 1965, стр. 117—126); Ф. Ф. Маслов, указ. соч., стр. 277.

<sup>10</sup> А. В. Венедиктов, Гражданская правовая охрана социалистической собственности в СССР, М.—Л., 1954, стр. 93, и др.

<sup>11</sup> А. Н. Арзамасцев, Охрана социалистической собственности по советскому гражданскому праву, Л., 1956, стр. 23.

<sup>12</sup> Д. Ф. Еремеев, Право личной собственности в СССР, М., 1958, стр. 118—119.

<sup>13</sup> Р. О. Халфина, Право личной собственности в СССР, М., 1964, стр. 124.

<sup>14</sup> Д. М. Генкин, Право собственности в СССР, М., 1961, стр. 171—172.

<sup>15</sup> В. Ф. Маслов, Осуществление и защита права личной собственности в СССР, М., 1961, стр. 177—178; О. С. Иоффе, Советское гражданское право, Л., 1958, стр. 352.

ուսյում են սեփականության պաշտպանությունը և ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ իրավաբանական իմաստ:

Հնդունելով, որ «քաղաքացիական իրավունքների ինստիտուտների ճշդ մեծամասնությունը, մասնավորապես պարտավորական իրավունքը, պարունակում են նորմեր, որոնց կիրառումն իր արդյունքում ունի սեփականության՝ որպես տնտեսական կատեգորիայի պահպանում»<sup>16</sup>, չի կարելի միևնույն ժամանակ շնորհակալ, որ հենց այդ ինստիտուտներն են օգտագործվում սուբյեկտիվ իրավունքի պահպանության համար և որ դրանց օգնությամբ սեփականության իրավունքը պաշտպանվում է այդ ինստիտուտներին հատուկ քաղաքացիական իրավական միջոցներով: Իրի կապակցությամբ ծագած պարտավորական հարաբերություններում պարտատիրոջ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը բազմաթիվ դեպքերում չի կարող չլինել նաև սուբյեկտիվ սեփականության իրավունքի պաշտպանություն<sup>17</sup>: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ անձնական սեփականության պարտավորական-իրավական պաշտպանության անձնական սեփականության քաղաքացիական-իրավական պաշտպանության ամբողջական պրոբլեմի կարևորագույն բաղկացուցիչ մասն է, որին մինչև այժմ իրավաբանական գրականության մեջ նվազ ուշադրություն է դարձվել:

Այժմեական է թվում սեփականության իրավունքի (մասնավորապես անձնական սեփականության) պաշտպանության տարբեր եզրանքների համալիր: ուսումնասիրությունը, որի արդյունքները կծառայեն մեր երկրում սեփականության հարաբերությունների ողջ համակարգի պաշտպանության հետագա ուժեղացմանը:

## ВЕЩНЫЕ И ОБЯЗАТЕЛЬСТВЕННЫЕ СПОСОБЫ ЗАЩИТЫ ПРАВА ЛИЧНОЙ СОБСТВЕННОСТИ

Э. Г. АЛЕКСАНИЯ

### Резюме

Защита личной собственности советских граждан является важной задачей социалистического права. Гражданскому праву в виде общего правила присущ исковой порядок защиты права собственности. Гражданско-правовые иски, направленные на защиту права собственности, делятся на вещноправовые и обязательственноправовые.

В специальной литературе было высказано мнение, что деление гражданских прав на вещные и обязательственные не может быть проведено последовательно и имеет лишь условное значение (В. Ф. Маслов, В. А. Тархов) и др. С таким мнением трудно согласиться, ибо между отношениями, непосредственным объектом которых являются вещи, и иными отношениями, имеются существенные отличия, которые имеют практи-

<sup>16</sup> Д. М. Генкин, указ. соч., стр. 171.

<sup>17</sup> А. А. Травкин, К вопросу об обязательственно-правовых способах защиты права социалистической собственности («Труды высшей следственной школы МВД СССР». Волгоград, 1973, стр. 140); см. также М. В. Маленкович, Условия защиты имущественных прав («Советская юстиция», 1969, № 4, стр. 17).

ческое значение при решении вопроса о применении того или иного способа защиты права личной собственности. Вещноправовые и обязательственноправовые способы защиты права личной собственности представляют собой единый комплекс, направленный на защиту отношений собственности. Сторонниками этой концепции являются А. Н. Арзамасцев, Д. Ф. Еремсеев, Р. О. Халфина и др. Следует отметить, что авторы, рассматривающие вещноправовые способы защиты в качестве основного средства охраны нарушенного права собственника, признают важное значение и обязательственных средств защиты.

Подавляющее большинство институтов гражданского права, в частности, обязательственного права, содержит нормы, применение которых имеет своим результатом охрану собственности как экономической категории (Д. М. Генкин). В то же время эти же институты используются для защиты субъективного права собственности.